ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 29.01.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ՍՑ-ԷՍ-2018/207

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ) ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 25.12.2018թ. թիվ 27/26-3/24148-18 գրությամբ «Մարիյա Մեդ Քօ» ՍՊԸ-ին /ՀՎՀՀ՝ 01564583/ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի 20.12.2018թ. թիվ 09/2049 գրության հիման վրա, 25.12.2018թ. նախաձեռնել է «Մարիյա Մեդ Քօ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու ընթացակարգ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. **<u>«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 20.12.2018թ. թիվ 09/2049 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Երևանի Հերացու անվան պետական բժշկական համալսարան հիմնադրամի կողմից հայտարարված՝ «ԷԱՃԱՊՁԲ-2019/16-5-ԵՊԲՀ» ծածկագրով էլ.աճուրդին 2018թ. նոյեմբերի 23-ին հայտ է ներկայացրել «Մարիյա Մեդ Քո» ՍՊԸ-ն: Գնահատող հանձնաժողովի 06.12.2018թ. թիվ 3 որոշմամբ 18-րդ, 19-րդ և 34-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «ՄԱՐԻՅԱ ՄԵԴ ՔՕ» ՍՊԸ-ն:

2018թ. դեկտեմբերի 6-ին ՀՀ ԿԱ ՊԵԿ հարցում է կատարվել ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 19-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին: Գնահատող հանձնաժողովի 2018թ. դեկտեմբերի 13-ի թիվ 4 որոշմամբ արձանագրվել է, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից 2018թ. դեկտեմբերի 11-ին տրված եզրակացության համաձայն՝ «Մարիյա Մեդ Քո» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների չափը գերազանցում է «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված շեմը»:

Պատվիրատուն ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն վերջինիս կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

3. «ՄԱՐԻՅԱ ՄԵԴ ՔՕ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Մարիյա Մեդ Քո» ՍՊԸ-ն 14.01.2019թ. Բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալ դիրքորոշումը.

«Ձեր վարույթում է քննվում «Մարիյա Մեդ Քո» ՍՊԸ-ին /այսուհետ նաև՝ Ընկերություն/ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում /այսուհետ նաև՝ Ցուցակ/ ներառելու վերաբերյալ ՍՑ-ԷՍ-2018/207 ծածկագրով պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքը:

Գտնում ենք, որ առկա չեն հիմքեր Ընկերությանը ցուցակում ներառելու համար հետևյալ պատճառաբանությամբ.

Երևանի Հերացու անվան պետական բժշկական համալսարան հիմնադրամ /այսուհետ նաև՝ Պատվիրատու/ կողմից հայտարարվել է «ԷԱՃԱՊՁԲ-2019/16-5-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ /այսուհետ նաև՝ Աճուրդ/:

Աճուրդին մասնակցելու նպատակով ի թիվս այլ կազմակերպությունների 23.11.2018թ. հայտ է ներկայացրել նաև «Մարիյա Մեդ Քօ» ՍՊԸ-ն /այսուհետ նաև՝ Ընկերություն/:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի /այսուհետ նաև՝ Հանձնաժողով/ 06.12.2018թ. կայացած նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Մարիյա Մեդ Քօ» ՍՊԸ-ն 18-րդ, 19-րդ և 34-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից:

Նույն օրը Պատվիրատուի կողմից ՀՀ կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշմամբ հաստատված էլեկտրոնային աճուրդի իրականացման կարգի /այսուհետ նաև՝ Կարգ/ 19-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին հարցում է ներկայացվել ՀՀ պետական եկամուտների կոմիտե /այսուհետ նաև՝ ՊԵԿ/:

Հանձնաժողովի 13.12.2018թ. թիվ 4 արձանագրության համաձայն՝ ՊԵԿ-ի կողմից 11.12.2018թ. տրված եզրակացության համաձայն՝ Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի 147,060 ՀՀ դրամ ժամկետանց հարկային պարտավորություններ:

Վերոգրյալով պայմանավորված՝ Հանձնաժողովը որոշել է մերժել «Մարիյա Մեդ Քօ» ՍՊԸ-ի հայտը:

Վերոհիշյալ խնդիրը պարզելու նպատակով, Ընկերությունը դիմել է Կոմիտե և խնդրել է տալ տեղեկատվություն 23.11.2018թ. /հայտը ներկայացնելու օրվա/ դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ:

Ի պատասխան Ընկերության հարցմանը, Կոմիտեն կողմից 14.12.2018թ. տրված թիվ 2029 գրությամբ հայտնել է, որ 10.12.2018թ. կատարվել է ՊԵԿ էլեկտրոնային կառավարման համակարգում առկա տվյալների և ընկերության անձնական հաշվի քարտերի համադրում, որի արդյունքում պարզվել է, որ պետական տուրքի անձնական

հաշվի քարտում չի հաշվառվել 2017 թվականի համար պետական տուրքի տարեկան գումարը:

ՊԵԿ-ը տեղեկացրել է, որ ընկերության անձնական հաշվի քարտում հաշվառվել են 25.12.2017թ. 40,000 ՀՀ դրամ և 80,000 ՀՀ դրամ պետական տուրքի գումարները, որի արդյունքում կատարվել են անձնական հաշվի քարտի վերահաշվարկ (պարտավորությունը 23.11.2018թ. էլեկտրոնային կառավարման համակարգում չի արտացոլվել):

ՊԵԿ-ը նաև նշել է, որ պետական տուրքի գումարները Ընկերության կողմից չեն վճարվել և 10.12.2018թ. դրությամբ ընկերությունն ունի 147,907 ՀՀ դրամ հարկային պարտավորություն:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի /այսուհետ նաև՝ Օրենք/ 2-րդ հոդվածի 23-րդ կետի համաձայն՝ գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն, ներառյալ՝ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպիսով, «Մարիյա Մեդ Քո» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունները առաջացել

են իրազեկված չլինելու հանգամանքով, քանի որ հարկային պարտավորության վերաբերյալ տեղեկատվությունը կարող էր ձեռք բերվել բացառապես ընկերության անձնական հաշվի քարտի քաղվածքի տվյալներում առկա տեղեկատվությունից, հետևաբար, այս պարագայում ի սպառ բացակայում է «Մարիյա Մեդ Քօ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված որևէ հայտարարություն իրականությանը չհապատասխանող լինելու հանգամանքը, քանի որ Ընկերության գործողություններում որևէ միտում կամ դիտավորություն չի եղել չկատարելու հարկային պարտավորությունները:

Ավելին, ՊԵԿ-ը նույնպես հայտնել է, որ 10.12.2018թ. կատարվել է ՊԵԿ էլեկտրոնային կառավարման համակարգում առկա տվյալների և ընկերության անձնական հաշվի քարտերի համադրում, որի արդյունքում պարտավորությունը 23.11.2018թ.՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ էլեկտրոնային կառավարման համակարգում չի արտացոլվել:

Ելնելով վերոգրյալից՝ «Մարիյա Մեդ Քօ» ՍՊԸ-ն գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում է ՀՀ ֆինանսների նախարարության գրությամբ ներկայցված «Մարիյա Մեդ Քօ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր Ընկերության լիազորված ներկայացուցիչ Արիս Շահդարյանը:

4. <u>ՍՑ-ԷՍ-2018/207 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 25.12.2018թ. թիվ 27/26-3/24148-18 գրությունը և կից փաստաթղթերը, «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի 20.12.2018թ. թիվ 09/2049 գրությունը, «Մարիյա Մեդ Քօ» ՍՊԸ-ի 14.01.2019թ. Բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնած դիրքորոշումը, «ԷԱՃԱՊՁԲ-2019/16-5-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ԷԱՃԱՊՁԲ-2019/16-5-ԵՊԲՀ»

ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 06.12.2018թ. նիստի թիվ 3 և 13.12.2018թ. նիստի թիվ 4 արձանագրությունները, «Մարիյա Մեդ Քօ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը.

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կարիքների համար բժշկական նշանակության ապրանքների, գործիքների և պարագաների ձեռք բերման նպատակով հայտարարված «ԷԱՃԱՊՁԲ-2019/16-5-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդին (այսուհետ՝ նաև Աճուրդ) հայտ է ներկայացրել «Մարիյա Մեդ Քօ» ՍՊԸ-ն՝ 5-րդ, 18-րդ, 19-րդ և 34-րդ չափաբաժինների մասով:

Ընկերությունը Աճուրդին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N1 հավելվածի՝ դիմում-հայտարարության 2-րդ հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ԷԱՃԱՊՁԲ-2019/16-5-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Հանձնաժողովի 06.12.2018թ. նիստի թիվ 3 արձանագրության 2-րդ կետով կայացված որոշմամբ «Մարիյա Մեդ Քօ» ՍՊԸ-ն ճանաչվել առաջին տեղ զբաղեցրած մասնակից՝ Աճուրդի 18-րդ, 19-րդ և 34-րդ չափաբաժինների մասով:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից 11.12.2018թ. տրամադրված տեղեկատվության համաձայն՝ «Մարիյա Մեդ Քօ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա՝ 23.11.2018թ. դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված շեմը գերազանցող՝ 147,060 ՀՀ դրամի չափով ժամկետանց հարկային պարտավորություն:

13.12.2018թ. նիստի թիվ 4 արձանագրության 1-ին կետի «ե» ենթակետով Հանձնաժողովն արձանագրել է, որ «Մարիյա Մեդ Քօ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա՝ 23.11.2018թ. դրությամբ ունեցել է գնումների մասին օրենքով սահմանված շեմը գերազանցող՝ 147,060 ՀՀ դրամի չափով ժամկետանց հարկային պարտավորություն:

Նույն արձանագրության 3-րդ կետով Հանձնաժողովը՝ ղեկավարվելով ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 20-րդ կետի դրույթներով՝ որոշել է մերժել «Մարիյա Մեդ Քօ» ՍՊԸ-ի ներկայացված հայտը՝ Աճուրդի 18-րդ, 19-րդ և 34-րդ չափաբաժինների մասով:

Ընթացակարգի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստի ժամանակ Ընկերության ներկայացուցիչը հայտնեց, որ ըստ ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից 10.12.2018թ. տրամադրած տեղեկանքի՝ Ընկերության անձնական հաշվի քարտում հաշվառվել են 25.12.2017թ. 40,000 ՀՀ դրամ և 80,000 ՀՀ դրամ պետական տուրքի գումարները, կատարվել է ՊԵԿ էլեկտրոնային կառավարման համակարգում առկա տվյալների և ընկերության անձնական հաշվի քարտերի համադրում և վերահաշվարկ, որի արդյքունքում պարզվել է, որ պետական տուրքի անձնական հաշվի քարտում չի հաշվառվել 2017 թվականի համար պետական տուրքի տարեկան գումարը, մինչդեռ Ընկերությունը՝ հիմք ընդունելով հարկային մարմնի առցանց համակարգում առկա տեղեկատվությունը՝ չէր կարող ենթադրել որևէ պարտավորության առկայության մասին (պարտավորությունը 23.11.2018թ. էլեկտրոնային կառավարման համակարգում չի արտացոլվել):

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ)՝

- 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին.
- 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի՝

- 19-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ Աճուրդն ամփոփվելուն հաջորդող աշխատանքային օրը՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական

եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) է ներկայացնում հարցում առաջին տեղն .զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով սահմանված «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը.

- 19-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի, ինչպես նաև նույն կարգի 11-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված փաստաթղթերը:

- 20-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն նույն կարգի 19-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Նույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվություն չստացվելու դեպքում առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը համարվում է այդ պահանջները բավարարող: Եթե կոմիտեի կողմից նույն կետով սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով սահմանված «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է, իսկ պայմանագիրը կնքված լինելու դեպքում կիրառվում են գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները: Եթե սահմանված ժամկետում կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվության արդյունքում արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած

մասնակիցը հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ, ապա հայտերի գնահատման նպատակով հրավիրված նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող լրացուցիչ տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

- 21-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին:

«ԷԱՃԱՊՁԲ-2019/16-5-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերի 1-ին մասի՝

• 7.10 կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարը սույն հրավերի 1-ին մասի 7.9 կետում նշված նիստն ավարտվելուն հաջորդող առաջին աշխատանքային օրը marketing.ysmu8@gmail.com հասցեով գործող էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը: Ընդ որում սույն ենթակետում հարցումն ուղարկվում է Lena_Najaryan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին սույն հրավերի 5-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան՝ էլեկտրոնային նամակի պատճենները միաժամանակ ուղարկելով karine_sargsyan@taxservice.am, gayane_antonyan@taxservice.am և procurement@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին.

• 7.11 կետի համաձայն՝ Կոմիտեն նույն հրավերի 1-ին մասի 7.10 կետի 2-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին սույն հրավերի 6-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան

տեղեկատվություն: Նույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը համարվում է իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մեժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրված տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

• 7.12 կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր եղանակով տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Ընդ որում, եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հայտով ներկայացված հայտարարությունը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Ընթացակարգի քննության շրջանակներում Ընկերությունը Բողոքներ քննող անձին ներկայացրեց ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկ վճարողների սպասարկման վարչության թիվ 3 բաժնի կողմից 14.12.2018թ. N 2029 գրությունը՝ հետևյալ բովանդակությամբ.

«10.12.2018թ. կատարվել է ՊԵԿ էլեկտրոնային կառավարման համակարգում առկա տվյալների և ընկերության անձնական հաշվի քարտերի համադրում, որի արդյունքում

պարզվել է, որ պետական տուրքի անձնական հաշվի քարտում չի հաշվառվել 2017թ. համար պետական տուրքի տարեկան գումարը:

Ելնելով վերոգրյալից՝ տեղեկացվում է, որ ընկերության անձնական հաշվի քարտում հաշվառվել են 25.12.2017թ. 40,000 ՀՀ դրամ և 80,000 ՀՀ դրամ պետական տուրքի գումարները, որի արդյունքում կատարվել է անձնական հաշվի քարտի վերահաշվարկ (պարտավորությունը 23.11.2018թ. էլեկտրոնային կառավարման համակարգում չի արտացոլվել): Հարկ է նշել, որ պետական տուրքի գումարները Ձեր ընկերության կողմից չեն վճարվել և 10.12.2018թ. դրությամբ ընկերությունն ունի 148,907 ՀՀ դրամ հարկային պարտավորություն, որից 117,250 ապառք, 31657 տույժ»:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 6-րդ հոդվածի՝

- 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ.

- 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

- 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող անձի մոտ՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Այսպիսով, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից 11.12.2018թ. տրամադրված տեղեկատվության համաձայն՝ «Մարիյա Մեդ Քօ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա՝ 23.11.2018թ. դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված շեմը գերազանցող՝ 147,060 ՀՀ դրամի չափով ժամկետանց հարկային պարտավորություն:

- 10.12.2018թ. կատարված՝ ՊԵԿ էլեկտրոնային կառավարման համակարգում առկա տվյալների և Ընկերության անձնական հաշվի քարտերի համադրման արդյունքում պարզվել է, որ պետական տուրքի անձնական հաշվի քարտում չի հաշվառվել 2017թ. համար պետական տուրքի տարեկան գումարը:

- Ընկերության անձնական հաշվի քարտում հաշվառվել են 25.12.2017թ. 40,000 ՀՀ դրամ և 80,000 ՀՀ դրամ պետական տուրքի գումարները, որի արդյունքում կատարվել է անձնական հաշվի քարտի վերահաշվարկ:

- Նշված պարտավորությունը Ընկերության կողմից հայտը ներկայացնելու օրվա՝ 23.11.2018թ. դրությամբ, Ընկերության հարկ վճարողի անձնական հաշվի քարտի քաղվածքում չի արտացոլվել:

Վերոգրյալով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ Ընկերության ժամկետանց հարկային պարտավորություններն առաջացել են ոչ վերջինիս գործողությունների կամ անգործության հետևանքով, այլ՝ ՀՀ հարկային մարմնի կողմից կատարված՝ Ընկերության անձնական հաշվի քարտի վերահաշվարկի արդյունքում, ընդ որում, պարտավորությունը 23.11.2018թ. էլեկտրոնային կառավարման համակարգում արտացոլված չի եղել:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ տվյալ դեպքում «Մարիյա Մեդ Քօ» ՍՊԸ-ի գնման գործընթացին հետագա մասնակցության դադարեցումը

պայմանավորված է եղել Ընկերության իրազեկված չլինելու հանգամանքով, քանի որ Ընկերությունն արձանագրված հարկային պարտավորության առկայության վերաբերյալ տեղեկատվությունը կարող էր ձեռք բերել բացառապես Ընկերության՝ հարկ վճարողի անձնական հաշվի քարտի քաղվածքի տվյալներում առկա տեղեկատվությունից:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ «Մարիյա Մեդ Քօ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 25.12.2018թ. թիվ 27/26-3/24148-18 գրությամբ «ՄԱՐԻՅԱ ՄԵԴ ՔՕ» ՍՊԸ-ին /ՀՎՀՀ՝ 01564583/ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ